

վարժարաններուն աշակերտ կու տայ: Այն ատեն թաղեցին ուրի՞շ սիրտ ուներ: Շատ հաւանական է:

Գիւղիս ազգայինները մեծ ջանք ցոյց կու տան առաջքն առնելու համար այն վնասին՝ որ նիւթական է. իսկ մեծ անհոգութիւն կը ներկայացնեն այն վնասին՝ որ բարոյական է, չգիտնալով անշուշտ որ բարոյական վնասէն ալ կծագի նիւթական վնաս, ինչպէս որ բարոյական շահէն ալ կը ծագի նիւթական շահ – կ'աղաչեմ, մի՛ բարկանաք, տէր երեսփոխաններ: – Այսպէս, երբ թաղին մէջ հրդեհ պատահի՝ ամբողջ թաղեցին տունէն դուրս կը վազէ եւ կրակը մարելու համար կարողութենէն վեր կաշխատի. իսկ երբ վարժարանն բարոյապէս մոխիր դառնայ՝ ոչ մէկ թաղեցին գլուխը պատուհանէն դուրս չհաներ: Թաղեցոյն ուշադրութիւնն վարժարանին վրայ հրաւիրելու ամենէն դիւրին եւ կտրուկ ճանքան. – վարժարանը նախ կազով թրջելու է եւ լուցկիով մը բռնկցնելու է զայն. ամբողջ թաղեցին գիշերազգեստով կը վազէ վարժարան եւ կրակը մարելու կ'աշխատի: Մոռնալու չէ սակայն, որ Հասգիւղցին լուցկիի պէս մէկէն ի մէկ հայրենասիրութեամբ կը վառի, կը բորբոքի երբեմն. եթէ այս բորբոքումէն անմիջապէս օգուտ քաղես՝ կրնաս իրմէ ստակ հաւաքել, մանրերկրորդ մը անցնելուն պէս՝ Հասգիւղցին կը մարի. Վիեննայի ամենէն գէշ լուցկիներուն տեսակէն է Հասգիւղցին, բռնկիլն ու մարիլը մէկ է. մինչեւ իսկ երբեմն *սիկան* մը վառելու համար անոնց քսան հատը մէկէն բռնկցնելու է:

Այսօր հինգ վարժարան կայ գիւղիս մէջ... մրցումն որպէս թէ յառաջադիմութիւն պիտի արտադրէր... հինգ վարժարանէն աշակերտ մը չելներ տարին:

Հասգիւղցին ինքնիրմէ բանի մը ձեռնարկելու յանդգնութիւն չունի, իսկ երբ գրգռող մը ըլլայ՝ այն ատեն ծայրայեղութեան կդիմէ:

Լուսաւորեալ երիտասարդներ կան հոս, որք իրարու հետ երկար ատեն բարեկամ չեն կրնար մնալ: Ասոնց բարեկամութիւնն շաբաթ մը միայն կտեւէ եւ այս պայմանաժամը լրանալուն պէս իրարմէ կբաժանուին: Ես ասոնց բարեկամութիւնն գէշ *չուխայէ* շինուած *բանթալօնի* կը նմանցեմ. շաբաթէ մը կը մաշի եւ օր մ'ալ քիչ մը ուժով նստելոյդ պէս՝ երկուքի կը բաժնուի եւ շապիկդ յետեւէդ կ'երեւայ: *Բանթալօն*ին այս կերպ բաժնուելուն ընդհանրապէս կ'ըսեն. «*բանթալօն*ս բացուած է». Հասգիւղցին ալ երբ իր մէկ բարեկամէ բաժնուի՝ կ'ըսէ. «մենք բացուած ենք»: Իսկ Հասգիւղի մէջ մտերիմ բարեկամ կը ճանչցուի այն մարդն՝ որ իւր ընկերին ուրիշէ մը գանակոծումը կը տեսնէ եւ չտեսնելու համար